ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 74
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ք. Երևան « 22 » 09 2025թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե պետական հիմնարկը
արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի անվանումը,
ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Մարգարյանի այսուհետ՝ «Պատվիրատու», որը գործում է
ազգանունը, անունը, պաշտոնը
իրենց ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի Վ. Գևորգյանի այսուհետ՝ «Կատարող» որը գործում է ՀՀ օրենսդրության և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է, համաձայն պայմանագրին կից ներկայացված հավելվածի, կազմակերպել **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե պետական հիմնարկի** տեխնիկական անվտանգության բնագավառի, արտադրական վտանգավոր օբյեկտների, տեխ. վիճակի և անվտանգ շահագործման (կազմակերպող) վերահսկող պատասխանատու և սպասարկող անձանց դասընթացները:
Որակավորման վկայականը կտրվի գիտելիքների ստուգումից հետո:
Պայմանագրի գործողության վերջնական ժամկետն է համարվում որակավորմանը մասնակցած անձանց գիտելիքների ստուգումն ու համապատասխան վկայականով որակավորման հավաստումը:
1.2.Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 1.1. կետով սահմանված որակավորման կազմակերպման համար Կատարողին վճարել սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը:
1.3.Կատարողը Պատվիրատուի, կողմից ներկայացված անձանց թույլատրում է մասնակցել իր կողմից կազմակերպվող խորհրդատվությոանը և գիտելիքների ստուգմանը սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը իր հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո՝ հերթական խմբում ներգրավելու միջոցով:
1.4.Սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները Կատարողի կողմից համարվում է ավարտված՝ Պատվիրատուին կամ սույն Պայմանագրի 1.2. կետում նշված անձանց համապատասխան վկայականներ ստանալու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝
2.1.1.Կատարողի կողմից կազմակերպվող խորհրդատվությունը և գիտելիքների ստուգմանը ապահովել իր կողմից ներկայացված անձանց մասնակցությունը,
2.1.2.Սույն Պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում վճարել սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը:
2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.2.1. Սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գինը վճարելուց հետո Կատարողից պահանջել իր կողմից ներկայացված անձանց ներգրավել կազմակերպվող խորհրդատվությունը և գիտելիքների ստուգմանը:

2.2.2. Խորհրդատվությանը և գիտելիքների ստուգման դրական գնահատման դեպքում Կատարողից պահանջել իր կողմից ներկայացված և որակավորմանը մասնակցած անձանց տրամադրել համապատասխան վկայական /վկայականներ/:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը վճարելու դեպքում Պատվիրատուի կողմից Խորհրդատվությանը ներկայացված անձանց ներգրավել կազմակերպվող խորհրդատվությանը և գիտելիքների ստուգման հերթական խմբում:

2.3.2. Պատվիրատուի կողմից ներկայացված անձի Խորհրդատվությանը և և գիտելիքների ստուգման դրական գնահատման դեպքում Խորհրդատվությանը մասնակցած անձանց տրամադրել համապատասխան վկայականներ:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, Պատվիրատուի կողմից ներկայացված անձանց չներգրավել կազմակերպվող որակավորման գործընթացին,

2.4.2.Գիտելիքների ստուգմանը մասնակցած անձանց բացասական գնահատականի դեպքում նրանց չտրամադրել համապատասխան վկայականներ:

3. Պայմանագրի գինը

3.1 Սույն Պայմանագրի գինը կազմում է՝ 29 .000 (քսանինը հազար) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. ենթակետով սահմանված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին վճարում կատարելու միջոցով՝ Հարկային հաշիվը դուրս գրելուց հետո յոթ օրվա ընթացքում:

3.3. Կատարողի կողմից սույն Պայմանագրի 3-րդ կետով վճարված գումարը վերադարձման ենթակա չէ, եթե.

ա/ Պատվիրատուի կողմից ներկայացված անձանցից որևէ մեկը չի ներկայացել Կատարողի կողմից կազմակերպվող որակավորմանը,

բ/ Գիտելիքների ստուգմանը մասնակցած անձինք ստացել են բացասական գնահատական:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և կնքված են կողմերի, կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմնագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե պետական հիմնարկ /Կազմակերպության անվանումը/ անուն, ազգանուն	«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վաղարշյան 13 ա Հասցե գտնվելու վայրը/հաշվառման	ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
00243582 (ՀՎՀՀ)/անձնագրային տվյալներ	ՀՎՀՀ 01556354
Բանկային վավերապայմանները	Հ/Հ 900018003724 ՖԾՆ գործառնական վարչություն
Գլխ. քարտուղար Կ. Մարգարյան (պաշտոնը, /ստորագրությունը/ անուն, ազգանուն,)	Տնօրեն Վ.Գևորգյան
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ N___74____ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Տեխնիկական անվտանգության բնագավառում պատասխանատու անձնակազմի՝ Կարճատև դասընթացի, և որակավորման հաստատմանը իրականացման թիվ --74---- պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե պետական հիմնարկի** կողմից ներկայացված 1(մեկ) անձի տվյալները.

N	Անուն, ազգանուն	Որակավորումը ըստ համապատասխան ոլորտի	Որակավորման կազմակերպման ձևը
1	2	3	4
1	Դավ Դավիկյան	Վերելակների անվտանգ շահագործման պատասխանատու անձ /29.000 դրամ/	Խորհրդատվություն և գիտելիքների ստուգման վերաորակավորում

Պատվիրատու

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե պետական հիմնարկ
/Կազմակերպության անվանումը/ անուն, ազգանուն
Երևան, Վաղարշյան 13 ա
Հասցե գտնվելու վայրը/հաշվառման
00243582
(ՀՎՀՀ)/անձնագրային տվյալներ
Բանկային վավերապայմանները

Գլխ. քարտուղար _____ Կ. Մարգարյան
(պաշտոնը, /ստորագրությունը/ անուն, ազգանուն,)

Կ.Տ

Կատարող

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Դավիթաշեն 4,
Ա. Միկոյան փող. 109/8
ՀՎՀՀ 01556354
Հ/Հ 900018003724 ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն _____ Վ.Գևորգյան

Կ.Տ